

Թեստ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Մաթեմատիկա

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է՝ 53

Թեստում ներկայացված առաջադրանքները, ձևաչափի տեսակետից տարատեսակ են: Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք կամ գրեք պատասխանը:

Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ կնշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր ձեր չեք բերի:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղծագործական կոճակները:



Առարկայական գիտելիք

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#)

(1) 1. Յուրաքանչյուր անանասը վաճառվում է միևնույն գնով, յուրաքանչյուր ավոկադոն նույնպես վաճառվում է միևնույն գնով: 3 անանասը ավելի շատ արժե, քան 5 ավոկադոն: Ո՞րը ավելի շատ կարժենա՝ 6 անանասը, թե՞ 9 ավոկադոն:

ա) 6 անանասը,

ծ) 9 ավոկադոն,

ց) հավասար արժեք կունենան,

զ) տվյալները բավարար չեն դա որոշելու համար:

(1) **2.** Մոտոցիկլիստը 2,5 ժամվա ընթացքում տեղաշարժվում էր 40 կմ/ժամ արագությամբ, իսկ հաջորդ 1,5 ժամվա ընթացքում՝ 60 կմ/ժամ արագությամբ: Ետ վերադառնալիս հաստատուն արագությամբ տեղաշարժվող մոտոցիկլիստին նույն տարածությունը անցնելու համար անհրաժեշտ եղավ 5 ժամ: Որքա՞ն էր մոտոցիկլիստի արագությունը ետ վերադառնալիս:

- ա) 32 կմ/ժամ,
- ბ) 34 կմ/ժամ,
- გ) 36 կմ/ժամ,
- დ) 38 կմ/ժամ:

(1) **3.** Հավասարակողմ եռանկյան կողմի երկարությունը 6 անգամ մեծ է ուղղանկյան լայնությունից, իսկ պարագիծը 3 անգամ մեծ է ուղղանկյան պարագծից: Քանի՞ անգամ է մեծ ուղղանկյան երկարությունը ուղղանկյան լայնությունից:

- ա) 2 անգամ,
- ბ) 3 անգամ,
- გ) 4 անգամ,
- დ) 5 անգամ:

(1) **4.** Դաթոն գնեց մի քանի մատիտ և մի քանի գրիչ: Նա ուներ ընդամենը 3 լարի և 10 թեթրի: Դաթոն յուրաքանչյուր մատիտի համար վճարեց 40 թեթրի, իսկ յուրաքանչյուր գրչի համար՝ 80 թեթրի: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել գումարը, որը մնաց Դաթոյին:


ա) 60 թեթրի,

ծ) 70 թեթրի,


ց) 80 թեթրի,

զ) 90 թեթրի:


(1) 5. Ստորև տրված դիագրամներից ո՞րը կարող ենք օգտագործել քառանկյունների, ուղղանկյունների և շեղանկյունների բազմությունների միջև փոխադարձ կապը ներկայացնելու համար:




ա)



ბ)



გ)



დ)

(1) **6.** Սեղանը անկյունագծով բաժանված է երկու եռանկյունների, որոնց մակերեսները 18 սմ^2 և 24 սմ^2 է: Ինչի՞նչ է հավասար փոքր հիմքի երկարության հարաբերությունը մեծ հիմքի երկարությանը:

ա) $\frac{3}{7}$ -ի,

բ) $\frac{3}{4}$ -ի,

գ) $\frac{2}{3}$ -ի,

դ) $\frac{4}{7}$ -ի:

(1) **7.** Մայրն իր երկու դուստրերի՝ Էլենեի և Սալոմեի, և երկու տղաների՝ Գիորգիի և Դավիթի համար կոնֆետներով լիքը տուփ գնեց: Նրանք փորձեցին կռահել, քանի՞ հատ կոնֆետ էր տուփի մեջ: Նրանց արտաահայտած ենթադրություններն այսպիսին էին.

Էլենե. Տուփի մեջ ուղիղ 34 կոնֆետ է:

Սալոմե. Տուփի մեջ կոնֆետների քանակը զույգ թիվ է:

Գիորգի. Տուփի մեջ 30-ից ավելի և 35-ից պակաս քանակի կոնֆետներ են:

Դավիթ. Տուփի մեջ կոնֆետների քանակը ուղիղ 33 է:

Նրանցից ճիշտ հայտնվեց միայն մեկ դստեր և մեկ տղայի ենթադրությունը:

Քանի՞ կոնֆետ էր տուփի մեջ:

ա) 30

ծ) 31

գ) 32

դ) 33

(1) **8.** Քանի՞ այնպիսի ամբողջ a թիվ է, որը բավարարում է $\frac{3}{8} < \frac{a}{12} < \frac{13}{18}$ պայմանին:

ա) 4

ბ) 5

გ) 6

დ) 7

(1) **9.** Թամարը մի քանի բանան և մի քանի մանգո գնեց, որոնց ընդհանուր կշիռը 5 կգ էր: Յուրաքանչյուր բանանը կշռում էր 200 գրամ, իսկ յուրաքանչյուր մանգոն՝ 300 գրամ: Գնած բանանների ընդհանուր կշիռը a կիլոգրամ էր: Ստորև թվարկածներից ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս, թե քանի հատ բանան և մանգո գնեց Թամարը:

ա) $200a + 300(5 - a)$

բ) $a : 200 + (5 - a) : 300$

գ) $0,2a + 0,3(5 - a)$

դ) $a : 0,2 + (5 - a) : 0,3$

(1) **10.** Ոսկերիչը 5 մատանի պատրաստեց, որոնց միջին քաշը 6 գրամ է: Այդ մատանիներից չորսն այնպիսին է, որ յուրաքանչյուրի քաշը 6 գրամից ավելի է և 7 գրամից պակաս: Թվարկածներից որի՞ն կարող է հավասար լինել հինգերորդ մատանու քաշը:

- ա) 2 գրամի,
- բ) 4 գրամի,
- գ) 6 գրամի,
- դ) 8 գրամի:

(1) **11.** 46 հատ կարմիր և 69 հատ դեղին վարդերից հյուսեցին ծաղկեպսակներ: Յուրաքանչյուր ծաղկեպսակում կարմիր վարդերի քանակը միմյանց հավասար է, հավասար է նաև յուրաքանչյուր ծաղկեպսակում դեղին վարդերի քանակը: Ընդամենը քանի՞ ծաղկեպսակ հյուսեցին:

ա) 21


ბ) 22

գ) 23

դ) 24

Տվյալների վերլուծում

Դիագրամի վրա տրված է, թե երկրում
բնակչության մեկ շնչի հաշվով քանի
կիլոգրամ տանձ և դեղձ աճեցրին 2007-
2010 թվականներին:



Հաջորդ երկու հարցերին պատասխանեք այս դիագրամի համաձայն:

Անցում հարցերին. [12](#) [13](#)

(1) **12.** Ո՞ր թվականին էր բնակչության մեկ շնչի հաշվով աճեցրած տանձի և դեղձի ընդհանուր կշիռը ամենաբարձրը:

ս) 2007

ծ) 2008

ճ) 2009

Պ) 2010

[Տեսնել դիագրամը](#)

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#)

(1) **13.** Երկրի բնակչության թվաքանակը 2010 թվականին, 2008 թվականի համեմատությամբ, 20%-ով աճեց: Քանի՞ անգամ ավելի էր երկրում 2008 թվականին աճեցրած տանձի կշիռը 2010 թվականին աճեցրած տանձի կշռից:

ա) $\frac{3}{2}$ անգամ,

ծ) $\frac{4}{3}$ անգամ,

ճ) $\frac{7}{5}$ անգամ,

զ) $\frac{9}{5}$ անգամ:

[Տեսնել դիագրամը](#)

(1) **14.** Ցանկացած m և n թվերի համար $m \otimes n$ հաշվարկվում է հետևյալ հավասարությանը. $m \otimes n = m^3 - n^2$:
Ինչի՞նչ է հավասար $(3 \otimes 5) \otimes 2$:

- ա) 1-ի,
- բ) 2-ի,
- գ) 3-ի,
- դ) 4-ի:

(1) **15.** Կոորդինատային հարթության վրա տեղադրված $M(-3; 2)$ և $N(1; 4)$ կետերը սիմետրիկ են F կետի նկատմամբ: Ինչի՞ է հավասար այն կետի կոորդինատները, որը $K(0; 2)$ կետին սիմետրիկ է նույն F կետի նկատմամբ:

ա) $(2; -4)$

ბ) $(-2; 0)$

գ) $(-2; 4)$

դ) $(2; 0)$

(1) **16.** Թվային առանցքի վրա x և y թվերի համապատասխան կետերի միջև տարածությունը հավասար է 8 միավորի:

Ստորև թվարկածներից ո՞ր հավասարությունն է անհնար:

ա) $x - y = -8$

ბ) $x + y = -4$

գ) $x - y = 4$

դ) $x + y = 16$

(1) **17.** Ուղևորական գնացքը բաղկացած է 3 վագոններից: Երրորդ վագոնում գտնվող բոլոր ուղևորների՝ առաջին վագոն անցնելու դեպքում առաջին վագոնում ուղևորների թվաքանակը 3 անգամ կմեծանա, իսկ երկրորդ վագոնում գտնվող բոլոր ուղևորների՝ առաջին վագոն անցնելու դեպքում առաջին վագոնում ուղևորների թիվը 4 անգամ կմեծանա: Քանի՞ անգամ կմեծանա առաջին վագոնում ուղևորների թվաքանակը երկրորդ և երրորդ վագոններում գտնվող բոլոր ուղևորների՝ այնտեղ անցնելու դեպքում:

- ա) 5 անգամ,
- ბ) 6 անգամ,
- გ) 7 անգամ,
- დ) 12 անգամ:

(1) **18.** Փայտի 12 միատեսակ չորսուներից դարսեցին ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող մարմին, որի չափսերն են $6 \text{ սմ} \times 4 \text{ սմ} \times 5 \text{ սմ}$: Քանի՞ այդպիսի չորսու է հարկավոր ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող մարմին դարսելու համար, որի չափսերն են $10 \text{ սմ} \times 12 \text{ սմ} \times 8 \text{ սմ}$:

ա) 24

ბ) 48

გ) 72

დ) 96

(1) **19.** Հայտնի է, որ.

I. Էլենեն կղիտի պատկերասրահը կամ արվեստի թանգարանը:

II. Եթե Էլենեն դիտի արվեստի թանգարանը, ապա նա կղիտի նաև պատկերասրահը:

Ո՞ր եզրակացությունն է բխում այդ պայմաններից անպայման:

ս) Էլենեն կղիտի պատկերասրահը,

ծ) Էլենեն կղիտի արվեստի թանգարանը,

ժ) Էլենեն չի դիտի պատկերասրահը,

Կ) Էլենե չի դիտի արվեստի թանգարանը:

Տվյալների բավարարում

(1) **20.** Ենթադրենք, յուրաքանչյուր չորրորդ տարին նահանջ տարի է: Յուրաքանչյուր նահանջ տարում փետրվար ամիսը 28 օրվա փոխարեն բաղկացած է 29 օրից: Մի որևէ տարում հունվարի 15-ը ուրբաթ էր:

Տրված է երկու պայման՝

I. Այդ տարվա նախորդ տարին չի եղել նահանջ տարի:

II. Այդ տարվա հաջորդ տարին եղել է նահանջ տարի:

Պարզելու համար, թե տրված տարվա ինչ օր է եղել մարտի 7-ը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

ճ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

դ) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **21.** Տրված է երեք հատված, որոնցից մեծագույնի երկարությունը հավասար է 10 սմ-ի:

Տրված է երկու պայման.

I. Այդ երեք հատվածներից փոքրագույնի երկարությունը հավասար է 4 սմ-ի:

II. Այդ երեք հատվածներից փոքրագույնի երկարությունը հավասար է 6 սմ-ի:

Պարզելու համար՝ կարելի՞ է, թե՞ ոչ այդ հատվածներից եռանկյուն կազմել.

ս) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

Պ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **22.** m և n բնական թվեր են:

Տրված է երկու պայման.

I. $m(n + 1)$ զույգ թիվ է:

II. $m(n + 3)$ զույգ թիվ է:

Պարզելու համար՝ զույգ է, թե՞ կենտ m թիվը.

ս) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

Պ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **23.** Ուղղանկյուն զուգահեռանիստի հիմքը քառակուսի է և կողմնային կողի երկարությունը 10 սմ է:

Տրված է երկու պայման.

I. Ուղղանկյուն զուգահեռանիստի հիմքի պարագիծը հավասար է 20 սմ-ի:

II. Ուղղանկյուն զուգահեռանիստի կողմնային նիստի պարագիծը հավասար է 30 սմ-ի:

Պարզելու համար, թե ինչի է հավասար ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

գ) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

ե) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(1) **24.** Այգում տնկած են միայն խնձորի, տանձի և դեղձի ծառեր:

Տրված է երկու պայման.

I. Խնձորի ծառերի քանակը 4-ով ավելի է տանձի ծառերի քանակից:

II. Խնձորի ծառերի քանակը 4-ով պակաս է դեղձի ծառերի քանակից:

Պարզելու համար, թե այգում ծառերի ընդհանուր քանակի n ը մասն է կազմում խնձորի ծառերի քանակը.

ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ,

ծ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ,

ց) I և II պայմանները միասին բավարար են, առանձին-առանձին ոչ մեկը բավարար չէ,

դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը,

յ) տրված պայմաններն անգամ միասին վերցված բավարար չեն:

(3) **25.** Դարակում 24 հատ գրիչ և 16 հատ մատիտ է դրված: **Առնվազն** քանի՞ հատ մատիտ պետք է ավելացնենք դարակի մեջ, որպեսզի դրանում մատիտների տոկոսային մասը դառնա 60%-ից ավելի:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **26.** Զուգահեռագծի երկու կողմերի երկարությունների գումարը հավասար է 8 սմ-ի, իսկ երեք կողմերի երկարությունների գումարը հավասար է 11 սմ-ի: Գտե՛ք զուգահեռագծի պարագծի բոլոր հնարավոր արժեքները:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **27.** Բնակելի շենքի բնակարանների համարակալման համար ձեռք բերեցին դրան վրա ամրացվող թվանշաններ և դրանց կիրառմամբ բնակարանները համարակալեցին համապատասխանաբար 1, 2, 3, ... բնական թվերով: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ եղավ 207 թվանշան: Ընդամենը քանի՞ բնակարան համարակալեցին:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **28.** Տրված են անագի և կապարի երկու համաձուլվածքներ: Անագի և կապարի քաշերը առաջին համաձուլվածքում այնպես են հարաբերում միմյանց, ինչպես 3:5, երկրորդ համաձուլվածքում՝ ինչպես 1:2, իսկ դրանց ձուլմամբ ստացված նոր համաձուլվածքում՝ ինչպես 4:7: Առաջին համաձուլվածքի քաշը 16 կգ է: Ինչի՞ է հավասար երկրորդ համաձուլվածքի քաշը:

Պատասխանը հիմնավորե՛ք:

(3) **29.** Աշակերտներին առաջարկեցին հետևյալ աշխատանքը.

1) Հաշվարկեք. I. $(57057 + 380) : 19$

II. $(7707 - 280) : 7$

III. $(520 \cdot 65) : 13$


2) Ուղևորական գնացքը մի քաղաքից դուրս եկավ 17:15 ժամին և երկրորդ քաղաքը հասավ 03:25 ժամին:

Իսկ ճեպընթաց գնացքին այդ նույն ճանապարհին անցնելու համար անհրաժեշտ եղավ 2 ժամ և 50 րոպեով պակաս ժամանակ: Որքա՞ն ժամանակ կպահանջվեր ճեպընթաց գնացքին ճանապարհին անցնելու համար:

3) Իրակլին 15 տարեկան է, Աննան՝ 1 տարեկան, Սանդրոն՝ 3 տարեկան, իսկ Մարիամը՝ 4 տարեկան:

Քանի՞ տարի հետո Իրակլիի տարիքը կդառնա Աննայի, Սանդրոյի և Մարիամի տարիքների գումարից 5 տարով պակաս:

4) Քառակուսին բաժանված է երկու հավասար ուղղանկյունների, որոնցից յուրաքանչյուրի պարագիծը 12 սմ է: Ինչի՞ է հավասար քառակուսու պարագիծը:



Հաջորդ էջին տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

1) I. $(57057 + 380) : 19 = 57057 : 19 + 380 : 19 = 303 + 20 = 323$

II. $(7707 - 280) : 7 = 7707 : 7 - 280 : 7 = 1101 - 40 = 1061$

III. $(520 \cdot 65) : 13 = (520 : 13) \cdot (65 : 13) = 40 \cdot 5 = 200$

2) 24 ժամ – 17 ժամ 15 րոպե = 6 ժամ 45 րոպե 3 ժամ 25 րոպե – 2 ժամ 50 րոպե = 35 րոպե

Ճեպընթաց գնացքին կպահանջվեր 6 ժամ 45 րոպե – 35րոպե = 6 ժամ 10 րոպե:

3) $1 + 3 + 4 = 8$, $15 - 8 + 5 = 12$, $12 : 3 = 4$. Պատասխանը՝ 4 տարի հետո:

4) $12 + 12 = 24$, $24 \cdot \frac{6}{4} = 36$. Պատասխանը՝ 36 սմ-ի:

- Մատնացույց արեք աշակերտի կողմից թույլ տրված յուրաքանչյուր սխալը և գրեք ուղղված տեսքով:

Ակադեմիական հմտություններ

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

I Ժամանակակից իրականության մեջ, որտեղ ծնողները ավելի ու ավելի սակավ ժամանակ են անցկացնում իրենց զավակների հետ, հատկապես կարևոր է գտնել բարոյական դաստիարակության արդյունավետ ուղիներ: Գոյություն ունի կարծիք, որ երեխաների կարծիքները՝ հայացքները՝ ճշտի և սխալի, արդարության և անարդարության վերաբերյալ, չեն ներկայացնում մեծահասակների ուսուցման ուղղակի արդյունքը: Այն ուղիներից մեկը, որը հնարավորություն է տալիս երեխաներին հասկանալու բարոյական վարքի առավելությունները, քննարկվում են հեքիաթները:

II Հեքիաթները փոխաբերությունների միջոցով կարող են կարևոր սոցիալական և բարոյական դեր կատարել երեխայի զարգացման մեջ: Հեքիաթում գոյություն ունեցող տեսողական պատկերները քողարկված կերպով արտացոլում են իրականությունը, ներկայացնում են փոխաբերություններ, որոնք օգնում են երեխաներին կատարելու ճիշտ ընտրություն: Նման փոխաբերությունները երեխաներին նրանց հասկանալի լեզվով փոխանցում են կարևոր բարոյական և կյանքի դասերը տեսանելի և հուզականորեն գրավիչ ձևով: Հեքիաթներում գոյություն ունեցող փոխաբերությունները կարող են օգնել երեխաներին հասկանալու փոխանցված այնպիսի վերացական հասկացություններն ու սկզբունքները, որոնք այլապես նրանց համար անհասկանալի կլինեին, քանի որ երեխաների մոտ դեռևս ձևավորված չէ վերացական մտածողության ունակություն: Փոխաբերությունները բարոյապես արդարացված և չարդարացված վարքագծերը վերածում են պատկերների: Դրական փոխաբերությունը գրավիչ և հետաքրքիր է դարձնում բարոյական վարքագիծը, մինչդեռ բացասական փոխաբերությունը ընթերցողին ցույց է տալիս անբարոյական վարքագծի հետևանքները և հորդորում է խուսափել նման վարքագծից: Օրինակ՝ «մութ անտառ» շփոթության, վախի և դժվարությունների փոխաբերություն է, «վիշապը»՝ անձնավորության սեփական թուլությունների փոխաբերություն է, որը պետք է հաղթահարել, «ոսկե խնձորը»՝ դժվար հասանելի երջանկության փոխաբերություն է, որի համար հերոսը անցնում է խոչընդոտներով լի երկար ճանապարհ:

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#)

III Այն, ինչը երեխայի մեջ բարոյականություն է սերմանում, ոչ թե արդարության /բարու հաղթանակն է հեքիաթի վերջում, այլ այն գրավիչ հերոսը, որի հետ երեխան կատարում է իր անձի նույնականացում: Այդ նույնականացման պատճառով երեխան իր երևակայության մեջ հերոսի հետ կանցնի բոլոր փորձությունների միջով և նրա հետ միասին կտոնի բարու հաղթանակը: Հեքիաթների երեխայական ընկալումը տարբերվում է նրանց տարիքի համաձայն, հեքիաթը երբեք «ուղղակիորեն» չի ընկալվում: Յուրաքանչյուր երեխա հեքիաթի թեման հասկանում է իր տարիքին, գիտելիքներին, փորձին, ֆիզիկական, հուզական, ճանաչողական և բարոյական զարգացման մակարդակին, այն ձգտումներին և մարտահրավերներին համապատասխան, որոնց բխվում է տվյալ երեխան տվյալ պահին:

IV Մի հետազոտության մեջ ուսումնասիրեցին 3-ից 9 տարեկան երեխաների կողմից նրանց համար անձանոթ փոխաբերությունները հասկանալու ունակությունը: Պարզվեց, որ այդ ունակությունը բարելավվում է տարիքի ավելացման հետ միասին, չնայած բոլոր տարիքի երեխաներին փոխաբերությունները հասկանալու համար անհրաժեշտ է տեսողական պատկեր/նկարազարդում:

V Հեքիաթում երեխան տեսնում է գործողությունը՝ կոնկրետ սցենարում, ինչը նրան օգնում է հասկանալու իրադարձությունների միջև պատճառա-հետևանքային կապերը և դրանք փոխանցել իրականությանը: Բացի այդ, հեքիաթը առաջացնում է հույզեր, ինչը մեծացնում է տեղեկատվությունը երկար ժամանակ հիշելու հավանականությունը:

Անցնել հարցերին. [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#)

[1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#) [21](#) [22](#) [23](#) [24](#) [25](#) [26](#) [27](#) [28](#) [29](#) [30](#) [31](#) [32](#) [33](#) [34](#) [35](#)

(1) **30.** Ո՞րն է առաջին պարբերությունից արված հիմնական եզրակացությունը:

ա) Ծնողները ավելի ու ավելի սակավ ժամանակ են անցկացնում իրենց զավակների հետ:

ծ) Բարոյական վարքի առավելությունների ըմբռնումը մեծահասակների ուսուցման արդյունք է:

ց) Բարոյական կրթության անուղղակի ուղիներից մեկը քննարկվում է հեքիաթը:

զ) Երեխաների բարոյական կրթության մակարդակը գնալով ավելի ու ավելի ցածրանում է:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) **31.** Ի՞նչ ճանապարհով է կարողանում հեքիաթում ներկայացված փոխաբերությունը փոխանցել երեխաներին իրականության մասին արժեքավոր դաս:

ս) Փոխաբերությունները հեքիաթում անհավանական իրադարձություններին շնորհում են իրատեսական նշանակություն և դրանք հետաքրքիր են դառնում երեխայի համար:

ծ) Փոխաբերության միջոցով վերացական բարոյական սկզբունքները ներկայացվում են որպես տեսանելի պատկերներ և հուզականորեն գրավիչ գործողություններ:

գ) Բացասական փոխաբերությունները բարոյապես անարդարացի վարքագիծը դարձնում են երեխայի համար գրավիչ :

դ) Դրական փոխաբերությունների միջոցով ներկայացված իրադարձությունները ստանում են զվարճալի տեսք և դառնում են երեխայի համար հեշտ հասկանալի:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) **32.** Ինչո՞ւ է հեքիաթն ավելի ուժեղ ազդեցություն գործում երեխայի վրա, քան ծնողի կամ ուսուցչի ուղղակի ցուցումները:

ս) Հեքիաթում բարին միշտ հաղթում է չարին, ինչը մատուցվում է երեխայի համար հասկանալի լեզվով:

ծ) Հեքիաթը երեխան ընկալում է իր տարիքին, փորձին, ճանաչողական և բարոյական զարգացման մակարդակին համապատասխան:

ց) Մանկության տարիներին փոխաբերություններն ավելի հեշտ հասկանալի են, քան ուղղակիորեն ասված ցուցումները:

ճ) Երեխան իրեն նույնականացնում է հեքիաթի հերոսի հետ, դառնում նրա հետ միասին գործող հերոս և այդ ճանապարհով ավելի լավ է հասկանում այս կամ այն վարքագծի արդարացիությունը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) **33.** Թվարկաձներից n° ր կարծիքի փաստարկման համար պիտանի կլինի չորրորդ պարբերությունում ներկայացված հետազոտության արդյունքը:

- ս) Երեխաների բարոյական զարգացման միակ աղբյուրը հեքիաթներում ներկայացված փոխաբերություններն են:
- ծ) Երեխաներին սովորեցնելու գործընթացում վերացական գաղափարների փոխանցումը խորհուրդ է տրվում ուղեկցել պատկերավոր նյութով:
- դ) Երեխաները վաղ տարիքից արդեն ունեն վերացական գաղափարները և բարոյական դիլեմաները հասկանալու ունակություն:
- Ծ) Երեխաները դժվարանում են «ուղղակի» հասկանալ հեքիաթի հիմնական գաղափարը, այդ հարցում նրանց օգնում են իրենց գիտելիքներն ու փորձը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) **34.** Թվարկաձներից ո՞րն է ազդեցության այն գլխավոր ուղին, որի միջոցով էլ հեքիաթները օգնում են երեխաներին հասկանալու բարոյական վարքագիծը:

ս) Հուզական ներգրավվածությունը և տեսողական փոխաբերությունները:

ծ) Հեքիաթի լեզվի պարզությունը՝ հստակ փոխանցված գաղափարները:

ց) Հեքիաթի ավանդական կառուցվածքը՝ երջանիկ ավարտ:

ճ) Հեքիաթի հերոսի հետ տարիքային մոտիկությունը և կոնկրետ սցենարը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(9) 35. Վերլուծական էսսե

Ուշադրությամբ ծանոթացե՛ք առաջադրանքում տրված երկու փոխադարձաբար հակասական դրույթներին: Կատարե՛ք ընտրություն՝ հոգուտ դրանցից մեկի: Բերե՛ք փաստարկներ ձեր ընտրությունը հիմնավորելու համար և քննադատաբար գնահատեք հարցը վճռելու երկրորդ հնարավոր ուղին:

- ա) Անհրաժեշտ է, որ ուսուցիչը մշտապես տնային առաջադրանքներ հանձնարարի, որպեսզի աշակերտները կարողանան ձեռք բերել առարկայական գիտելիք և զարգացնեն գործնական ունակություններ:
- բ) Դպրոցը և դասաժամի գործընթացը ներկայացնում են առարկայական գիտելիք ձեռքբերելու, ինչպես նաև գործնական ունակություններ զարգացնելու եզակի արդյունավետ միջոց, որոնք օրակարգից վերացնում են աշակերտին տնային առաջադրանքներով մշտապես ծանրաբեռնելու հարցը:

Փոխադրությունը պետք է պարունակի առնվազն 120 բառ: